

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Կապիտալի ազատ տեղաշարժի ապահովման համար ֆինանսական շուկաներում պայմանների ստեղծման նպատակով ֆինանսական ոլորտում տեղեկությունների, այդ թվում՝ կոնֆիդենցիալ տեղեկությունների փոխանակման մասին

Բելառուսի Հանրապետության Կառավարությունը եւ Բելառուսի Հանրապետության Ազգային բանկը, Ղազախստանի Հանրապետության Կառավարությունը եւ Ղազախստանի Հանրապետության Ազգային բանկը, Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը եւ Ռուսաստանի Դաշնության Կենտրոնական բանկը, այսուհետ՝ Կողմեր,

հիմնվելով «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 70-րդ հոդվածի դրույթների վրա,

նպատակ ունենալով ֆինանսական շուկաներում պայմաններ ստեղծելու կապիտալի ազատ տեղաշարժն ապահովելու համար,

հայտնելով փոխշահավետ համագործակցություն պահպանելու իրենց մտադրության մասին,

գիտակցելով Բանկային վերահսկողության բազելյան կոմիտեի, Միջազգային հաշվարկների բանկի, Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության (ՏՀՀԿ), Ապահովագրական վերահսկողների միջազգային ասոցիացիայի, Արժեթղթերի հանձնաժողովների միջազգային կազմակերպության, ինչպես նաեւ Փողերի լվացման դեմ պայքարի ֆինանսական գործողությունների հանձնախմբի (ՖԱՏՖ) հանձնարարականների կատարման կարեւորությունը,

ձգտելով ապահովել ֆինանսական ծառայությունների սպառողների ու ներդրողների իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանությունը,

ընդունելով ֆինանսական շուկաների ոլորտում ինտեգրացիոն գործընթացների խորացման նպատակով տեղեկությունների փոխանակման եւ դրանց օգտագործման

կարգ սահմանելու, ինչպես նաեւ ֆինանսական շուկայի մասնակիցների իրավունքների պաշտպանության նպատակով Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների (այսուհետ՝ անդամ պետություններ) լիազոր մարմինների միջեւ կոնֆիդենցիալ տեղեկությունների փոխանակումն ապահովելու անհրաժեշտությունը,

համարժեք եւ համապատասխան ճանաչելով կոնֆիդենցիալ տեղեկությունների պաշտպանության՝ Կողմերի կողմից կիրառվող մոտեցումները եւ մակարդակը,

համաձայնեցին հետեւյալի մասին.

Գլուխ I. Ընդհանուր դրույթներ

Հոդված 1. Սահմանումները

Սույն Համաձայնագրում կիրառվում են հասկացություններ, որոնք ունեն հետեւյալ իմաստը՝

«հարցում ստացած մարմին»՝ անդամ պետության լիազոր մարմին, որին, սույն Համաձայնագրին համապատասխան, տեղեկությունների տրամադրման վերաբերյալ հարցում է ուղարկվում,

«հարցում ներկայացրած մարմին»՝ անդամ պետության լիազոր մարմին, որը տեղեկությունների տրամադրման վերաբերյալ հարցում է ուղարկում՝ սույն Համաձայնագրին համապատասխան,

«կոնֆիդենցիալ տեղեկություններ»՝ անդամ պետության լիազոր մարմնում վերջինիս լիազորությունների իրականացման շրջանակներում ստացվող, դրա տնօրինության տակ գտնվող, պետական կամ անդամ պետության օրենսդրությամբ դրան հավասարեցված այլ գաղտնիք (պետական գաղտնիք) չհանդիսացող տեղեկություններ, որոնց հասանելիությունը սահմանափակ է եւ որոնք, անդամ պետության օրենսդրության համաձայն, դիտարկվում են որպես կոնֆիդենցիալ,

«հիմնական (մայր) կազմակերպություն»՝ մեկ անդամ պետության իրավաբանական անձ, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն տիրապետում է (ձեռք է բերում) քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի) ավելի քան 50 տոկոսը եւ (կամ) ունի մեկ այլ անդամ պետության ֆինանսական կազմակերպության կողմից որոշումների կայացման վրա ազդելու հնարավորություն, կամ մեկ անդամ պետության ֆինանսական կազմակերպություն, որն այլ անդամ պետության տարածքում ունի (ստեղծում է) մասնաճյուղ, ներկայացուցչություն՝ այդ մյուս անդամ պետության օրենսդրությանը համապատասխան,

«անդրսահմանային կազմակերպություն»՝ անդամ պետության տարածքում ստեղծված (ստեղծվող) ֆինանսական կազմակերպություն, որում այլ անդամ պետության իրավաբանական անձը ուղղակիորեն կամ անուղղակիորեն տիրապետում է (ձեռք է բերում) քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի) ավելի քան 50 տոկոսը եւ (կամ) ունի որոշումների կայացման վրա ազդելու հնարավորություն, եւ (կամ) մեկ անդամ պետության ֆինանսական կազմակերպության կողմից այլ անդամ պետության տարածքում այդ մյուս անդամ պետության օրենսդրությանը համապատասխան ստեղծված (ստեղծվող) մասնաճյուղ, ներկայացուցչություն,

«լիազոր մարմին»՝ անդամ պետության մարմին, որն այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, օժտված է ֆինանսական շուկայի, ֆինանսական կազմակերպությունների (ֆինանսական շուկայի առանձին ոլորտների) կարգավորում եւ (կամ) վերահսկողություն ու հսկողություն իրականացնելու լիազորություններով,

«ֆինանսական կազմակերպություն»՝ իրավաբանական անձ, որն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, իրականացնում է ֆինանսական շուկայում ֆինանսական ծառայությունների մատուցման գործունեություն,

«ֆինանսական ծառայություններ»՝ ֆինանսական բնույթի ծառայություններ, որոնք ներառում են բանկային ծառայություններ, ապահովագրական ծառայություններ եւ ապահովագրական ծառայությունների շարքին դասվող ծառայություններ, արժեթղթերի շուկայում ծառայություններ,

«Ֆինանսական շուկա»՝ անդամ պետությունների՝ բանկային ծառայությունների շուկա, ապահովագրական ծառայությունների եւ ապահովագրական ծառայությունների շարքին դասվող ծառայությունների շուկա, արժեթղթերի շուկա:

Հոդված 2. Համաձայնագրի առարկան

1. Սույն Համաձայնագրի առարկան այն հարաբերություններն են, որոնք ծագում են մեկ անդամ պետության լիազոր մարմինների՝ մեկ այլ անդամ պետության լիազոր մարմինների հետ տեղեկությունների, այդ թվում՝ կոնֆիդենցիալ տեղեկությունների փոխանակման մասով փոխգործակցության շրջանակներում:

2. Լիազոր մարմինները տեղեկությունների, այդ թվում՝ կոնֆիդենցիալ տեղեկությունների փոխանակումն իրականացնում են՝ հաշվի առնելով դրանց օգտագործման եւ տարածման կարգին անդամ պետությունների օրենսդրությամբ ներկայացվող պահանջները:

Գլուխ II. Տեղեկությունների փոխանակումը ֆինանսական շուկայում եւ լիազոր մարմինների փոխադարձ խորհրդակցությունները

Հոդված 3. «Ինտերնետ» տեղեկատվական-հաղորդակցական ցանցում տեղեկությունների հասանելիության ապահովման կարգը

1. Լիազոր մարմինները սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված տեղեկությունների հասանելիությունն ապահովում են եռամսյակի համար՝ հաշվետու եռամսյակին հաջորդող 60 օրացուցային օրվանից ոչ ուշ, իսկ տարվա արդյունքներով՝ հաշվետու տարվան հաջորդող 120 օրացուցային օրվանից ոչ ուշ, «Ինտերնետ» տեղեկատվական-հաղորդակցական ցանցում իրենց պաշտոնական կայքերի (այսուհետ՝ պաշտոնական կայքեր) հատուկ նախատեսված բաժիններում:

2. Լիազոր մարմինների պաշտոնական կայքերում տեղադրվում են ֆինանսական շուկայի վիճակի եւ ֆինանսական կազմակերպությունների

գործունեության մասին հետեւյալ տեղեկությունները (ըստ յուրաքանչյուր անդամ պետության).

1) այն նորմատիվ իրավական ակտերի նախագծերը, որոնք առնչվում են ֆինանսական կազմակերպությունների գործունեության եւ ֆինանսական ծառայությունների մատուցման հետ կապված հարցերի, եթե այդ նախագծերը, անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, հասանելի են դարձվում անսահմանափակ թվով անձանց,

2) անդամ պետության ֆինանսական կազմակերպությունների եւ գրանցված անդրսահմանային կազմակերպությունների վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ, որոնք ներառում են հետեւյալ տվյալները՝

համապատասխան ֆինանսական շուկան.

անդրսահմանային կազմակերպությունների անվանումները.

թույլտվությունների եւ (կամ) լիցենզիաների (պետական գրանցման մասին վկայականների) տեսակը եւ տրամադրման ամսաթիվը,

3) բանկային ծառայությունների ոլորտում՝

ընդհանուր առմամբ բանկերի, այդ թվում՝ անդրսահմանային կազմակերպությունների ակտիվները.

ընդհանուր առմամբ բանկերի, այդ թվում՝ անդրսահմանային կազմակերպությունների պարտավորությունները.

ընդհանուր առմամբ բանկերի, այդ թվում՝ անդրսահմանային կազմակերպությունների սեփական կապիտալը.

4) ապահովագրական ծառայությունների ոլորտում՝

ընդհանուր առմամբ շուկայում ապահովագրական կազմակերպությունների, այդ թվում՝ անդրսահմանային կազմակերպությունների միագումար ակտիվները.

ընդհանուր առմամբ շուկայում ապահովագրական կազմակերպությունների, այդ թվում՝ անդրսահմանային կազմակերպությունների սեփական կապիտալը.

ընդհանուր առմամբ շուկայում ապահովագրական կազմակերպությունների, այդ թվում՝ անդրսահմանային կազմակերպությունների ապահովագրական պահուստները.

ընդհանուր առմամբ շուկայում ապահովագրական կազմակերպությունների, այդ թվում՝ անդրսահմանային կազմակերպությունների ապահովագրական պարգեները.

ընդհանուր առմամբ շուկայում ապահովագրական կազմակերպությունների, այդ թվում՝ անդրսահմանային կազմակերպությունների ապահովագրական վճարումները,

5) արժեթղթերի շուկայի ոլորտում՝ մեկ անդամ պետության թողարկողների այն արժեթղթերի հետ կապված գործարքների քանակը եւ ծավալը, որոնք թույլատրվել են շրջանառության այլ անդամ պետությունների՝ կազմակերպված արժեթղթերի շուկաներում,

6) այլ տեղեկություններ, որոնց փոխանակման մասին լիազոր մարմինները կարող են պայմանավորվել առանձին, եւ որոնք չեն հակասում անդամ պետությունների օրենսդրությանը:

3. Եվրասիական տնտեսական հանձնաժողովն իրականացնում է սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված տեղեկությունների հավաքումը եւ լիազոր մարմինների կողմից իրենց պաշտոնական կայքերում դրանց տեղադրման ժամկետը լրանալուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում իրականացնում է ընդհանրացված տեղեկությունների տեղադրում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի պաշտոնական կայքում:

4. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո 30 օրացուցային օրվա ընթացքում լիազոր մարմինները Եվրասիական տնտեսական հանձնաժողով են ներկայացնում տվյալներ իրենց պաշտոնական կայքերում սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված տեղեկությունների տեղադրման համար պատասխանատու կառուցվածքային ստորաբաժանումների մասին:

Այլ պատասխանատու ստորաբաժանումների նշանակման կամ այլ փոփոխությունների դեպքում լիազոր մարմինները Եվրասիական տնտեսական հանձնաժողովին դրա մասին տեղեկացնում են համապատասխան փոփոխությունների կատարման ամսաթվից հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:

Լիազոր մարմինների փոփոխության դեպքում Կողմերը դրա մասին տեղեկացնում են միմյանց եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովին:

Հոդված 4. Լիազոր մարմինների փոխադարձ խորհրդակցությունները

1. Անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան՝ լիազոր մարմիններն իրականացնելու են փոխադարձ խորհրդակցություններ եւ կարծիքների փոխանակում ֆինանսական շուկայի ոլորտին առնչվող՝ իրենց իրավասության (լիազորությունների) շրջանակում գտնվող հետեւյալ հարցերի վերաբերյալ.

1) ֆինանսական շուկայի եւ ֆինանսական կազմակերպությունների կարգավորման, վերահսկողության եւ հսկողության բնագավառում իրենց պետության օրենսդրություն եւ նորմատիվ իրավական ակտերի նախագծեր, ինչպես նաեւ իրենց պետությունների օրենսդրության ներդաշնակեցման ուղղություններ՝ հաշվի առնելով միջազգային փորձը եւ լավագույն միջազգային պրակտիկան,

2) ֆինանսական ծառայությունների սպառողների եւ ներդրողների իրավունքների ու շահերի պաշտպանության համակարգերի զարգացում՝ ներառյալ ավանդների, ապահովագրական վճարումների երաշխավորման հետ կապված հարցերը,

3) անդամ պետությունների իրավակիրառ պրակտիկայի վերաբերյալ տեղեկությունների փոխանակում,

4) լիազոր մարմինների աշխատակիցների տեխնիկական հմտությունները բարելավելու եւ որակավորումը բարձրացնելու նպատակով սեմինարների,

որակավորման դասընթացների, աշխատանքային հանդիպումների կազմակերպման հարցում աջակցություն,

5) ընդհանուր առմամբ ֆինանսական շուկայում եւ նշված շուկայում գործող առանձին ֆինանսական կազմակերպությունների գործունեության առնչությամբ առաջացող ռիսկերի բացահայտում եւ գնահատում, ռիսկերի կառավարման համակարգերի կազմակերպմանը ներկայացվող պահանջների կատարելագործում,

6) աջակցություն անդամ պետությունների բնակչության շրջանում ֆինանսական գրագիտության մակարդակի բարձրացման հարցում, ինչպես նաեւ ծառայությունների մատուցման հետ կապված վեճերի մինչդատական կարգով, այդ թվում՝ ֆինանսական օմբուդսմենի ինստիտուտի միջոցով, լուծման ինստիտուտների ստեղծում եւ զարգացում,

7) ֆինանսական կազմակերպություններում ղեկավար պաշտոններ զբաղեցնող անձանց եւ ֆինանսական կազմակերպությունների կառավարմանը մասնակցող այլ անձանց որակավորմանը եւ գործարար հեղինակությանը ներկայացվող պահանջների կատարելագործում՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան,

8) ֆինանսական շուկայի եւ ֆինանսական կազմակերպությունների կարգավորման, վերահսկողության եւ հսկողության ընթացքում առաջացող այլ հարցեր:

2. Լիազոր մարմիններն իրականացնում են կարծիքների փոխանակում ֆինանսական շուկայի կարգավորման, վերահսկողության եւ հսկողության հետ կապված հարցերի վերաբերյալ, այդ թվում՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովին առընթեր ֆինանսական շուկաների հարցերով խորհրդատվական կոմիտեի շրջանակներում:

Գլուխ III. Ֆինանսական շուկայի ոլորտում տեղեկությունների, այդ թվում՝
կոնֆիդենցիալ տեղեկությունների փոխանակումը

Հոդված 5. Կիրառության ոլորտը

1. Իրենց իրավասության (լիազորությունների) շրջանակներում լիազոր մարմինները ցանկացած լիազոր մարմնի հարցման հիման վրա իրականացնում են տեղեկությունների, այդ թվում՝ կոնֆիդենցիալ տեղեկությունների փոխանակում՝ հնարավորինս լիարժեք ծավալով՝ ներառյալ հետեւյալ տեղեկությունները.

1) պետական գրանցում, լիցենզիայով (թույլտվությամբ) նախատեսված գործունեություն, այլ անդամ պետությունում գրանցված ֆինանսական կազմակերպության բաժնետոմսերի (մասնակցության բաժնեմասերի) ձեռքբերման համար համաձայնության տրամադրում կամ տրամադրման մերժում, բանկային խմբի (բանկային հոլդինգի), բանկային կոնգլոմերատի կազմ, հիմնական (մայր) կազմակերպության կառավարման կառուցվածք (կառավարման մարմինների կազմ), հիմնական (մայր) կազմակերպության կառավարում եւ ներքին հսկողության համակարգ, բաժնետերեր (մասնակիցներ), փոխկապակցված անձինք, մասնաճյուղեր, ներկայացուցչություններ, ինչպես նաեւ կազմակերպություններ, որոնց դեպքում այլ անդամ պետության ֆինանսական շուկայում գործող կազմակերպությունը կանոնադրական կապիտալում գերակշռող մասնակցության ուժով կամ կնքված պայմանագրին համապատասխան կամ այլ կերպ հնարավորություն ունի կանխորոշելու նշված կազմակերպությունների կառավարման մարմինների կողմից ընդունվող որոշումները,

2) անդրսահմանային կազմակերպության բացման վերաբերյալ որոշում կայացնելու համար անհրաժեշտ տեղեկություններ, այդ թվում՝ տվյալներ հիմնական (մայր) կազմակերպության ֆինանսական վիճակի վերաբերյալ,

3) ֆինանսական կազմակերպությունների գործունեության վերահսկողություն եւ հսկողություն, դրանց կողմից պրուդենցիալ նորմատիվների պահպանման մոնիթորինգ,

4) հիմնական (մայր) կազմակերպության եւ անդրսահմանային կազմակերպության, ինչպես նաեւ կանոնավոր անդրսահմանային գործառնություններ իրականացնող ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ անցկացված ստուգումներ եւ դրանց արդյունքները,

5) հիմնական (մայր) կազմակերպության, անդրսահմանային կազմակերպության կամ դրանցում ղեկավար պաշտոններ զբաղեցնող անձանց նկատմամբ ներգործության միջոցների եւ պատժամիջոցների կիրառում,

6) ֆինանսական կազմակերպությունների, այդ թվում՝ արժեթղթերը թողարկողների կողմից անդամ պետությունների՝ տեղեկությունների բացահայտման վերաբերյալ օրենսդրության պահպանման մոնիթորինգի արդյունքներ,

7) կազմակերպված սակարկությունների ժամանակ ինսայդերական տեղեկությունների ոչ իրավաչափ օգտագործման, շուկայի մանիպուլյացիայի ձեռով չարաշահումների կանխարգելում, բացահայտում եւ կանխում, հակաիրավական կամ այլ անօրինական, այդ թվում՝ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման (լվացման) եւ ահաբեկչության ֆինանսավորման հետ կապված գործառնությունների, ինչպես նաեւ ֆինանսական շուկայում, որի կարգավորումը վերապահված է լիազոր մարմինների իրավասությանը (լիազորություններին), այլ խախտումների բացահայտում,

8) անդամ պետությունների ապահովագրական շուկաներում ապահովագրական եւ վերաապահովագրական գործառնությունների իրականացում,

9) այլ տեղեկություններ, որոնք, անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, վերապահված են լիազոր մարմինների իրավասությանը (լիազորություններին):

2. Եթե սույն Համաձայնագրով նախատեսված տեղեկություններն անմիջականորեն առկա են կամ կարող են ստացվել հարցում ստացած մարմնի պետությունում, ապա այդ մարմինը բոլոր ջանքերը կգործադրի, որ ամբողջ ծավալով աջակցի հարցվող տեղեկությունների ստացմանը:

3. Լիազոր մարմինը կարող է կոնֆիդենցիալ տեղեկությունների տրամադրման վերաբերյալ հարցում (այսուհետ՝ հարցում) ուղարկել միայն իր գործառույթների իրականացման նպատակներով:

Հոդված 6. Կոնֆիդենցիալ տեղեկությունների փոխանակման եղանակները

Կոնֆիդենցիալ տեղեկությունների փոխանակումը լիազոր մարմինների կողմից իրականացվում է գրավոր, առերես խորհրդակցությունների միջոցով եւ էլեկտրոնային եղանակով՝ կապի պաշտպանված ուղիներով՝ Կողմերի շահագրգռվածության դեպքում հնարավոր հետագա գրավոր հաստատմամբ:

Կոնֆիդենցիալ տեղեկությունների փոխանակման եղանակի կիրառությունը Կողմերի միջեւ համաձայնեցվում է երկկողմ հիմունքներով՝ Կողմերի շահագրգռվածության դեպքում:

Հոդված 7. Կոնֆիդենցիալ տեղեկություններ տրամադրելու մասին հարցման բովանդակությունը

1. Հարցումը պետք է ներառի հետեւյալ տվյալները.

1) հարցում ներկայացրած մարմնի անվանումը,

2) հարցում ստացած մարմնի անվանումը,

3) հղում սույն Համաձայնագրին,

4) հարցումն ուղարկելու համար հիմք հանդիսացած փաստերի նկարագրությունը,

5) սուբյեկտների անվանումները, որոնց առնչությամբ կոնֆիդենցիալ տեղեկություններ են հարցվում,

6) հարցման նպատակների շարադրանքը,

7) հարցվող կոնֆիդենցիալ տեղեկությունների նկարագրությունը,

8) տվյալներ այն անձանց մասին, որոնց մոտ ենթադրաբար առկա են հարցվող տեղեկությունները (եթե այդպիսիք կան),

9) տեղեկություններ հարցվող կոնֆիդենցիալ տեղեկությունների ստացման ժամանակ անհրաժեշտ նախազգուշական միջոցառումների մասին,

10) հղում նորմատիվ իրավական ակտերին, որոնց դրույթները խախտվում են այն փաստերով, որոնց առնչությամբ հարցվում են տեղեկությունները,

11) տվյալներ հարցում ներկայացրած մարմնի ներկայացուցիչների՝ հարցման կատարմանը մասնակցելու անհրաժեշտության մասին,

12) հարցումը կատարելու համար անհրաժեշտ այլ տվյալներ:

2. Հարցումը ստորագրվում է հարցում ներկայացնող մարմնի ղեկավարի կամ ղեկավարի տեղակալի կողմից:

3. Ստացված հարցման իսկության կամ բովանդակության վերաբերյալ կասկածներ առաջանալու դեպքում հարցում ստացած մարմինն իրավունք ունի պահանջելու այդ հարցման ուղարկման գրավոր հաստատում:

Հոդված 8. Լիազոր մարմինների փոխգործակցությունը հարցումը կատարելու ժամանակ

1. Հարցում ստացած մարմինն, անհրաժեշտության դեպքում, կարող է հարցում ներկայացրած մարմնի ներկայացուցիչներին թույլատրել մասնակցելու հարցման կատարմանը, եթե դա չի հակասում հարցում ստացած մարմնի պետության օրենսդրությանը:

2. Լիազոր մարմիններն իրավասու են անդրսահմանային կազմակերպությունների կարգավորման, վերահսկողության եւ հսկողության հարցերով կոնֆիդենցիալ տեղեկությունների (կարծիքների) փոխանակումն իրականացնել հանդիպումների, համատեղ խորհրդակցությունների, բանակցությունների անցկացման, ինչպես նաեւ այդ նպատակով աշխատակիցներին անդամ պետություններ գործուղելու միջոցով:

Հոդված 9. Հարցման կատարումը

1. Հարցումը կատարվում է այն ստանալու ամսաթվից հետո 30 օրացուցային օրվա ընթացքում՝ հարցում ստացած մարմնի պետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Հարցումը ժամանակին կատարելը խոչընդոտող կամ հետաձգող հանգամանքներն ի հայտ գալու դեպքում հարցում ստացած մարմինը հարցումն ստանալու ամսաթվից հետո 15 օրացուցային օրվա ընթացքում դրա մասին ծանուցում է ուղարկում հարցում ներկայացրած մարմին՝ նշելով հարցումը ժամանակին կատարելը խոչընդոտող կամ հետաձգող պատճառները:

2. Հարցման պատասխանը, այդ թվում՝ հարցումը կատարելու մերժումը, հարցում ներկայացրած մարմնին տրամադրվում է գրավոր:

Հոդված 10. Հարցման կատարումը մերժելը

1. Հարցում ստացած մարմինն իրավասու է ամբողջությամբ կամ մասնակի մերժել կատարելու հարցումը հետեւյալ դեպքերում՝

1) հարցման կատարումը հակասում է հարցում ստացած մարմնի պետության օրենսդրությանը կամ միջազգային պարտավորություններին,

2) հարցում ստացած մարմնի պետության իրավասու մարմինների կողմից քրեական գործ է հարուցվել այն փաստերի կամ անձանց առնչությամբ, որոնց հետ կապված է ուղարկվել հարցումը, կամ հարցում ստացած մարմնի պետության իրավասու մարմինների կողմից նշված անձանց նկատմամբ կամ նշված փաստերի հետ կապված պատժամիջոցներ են կիրառվել (բացառությամբ այն դեպքերի, երբ հարցում ներկայացրած մարմինը հիմքեր կներկայացնի, որոնց համաձայն, ենթադրվող պատժամիջոցները պատիժ չեն հանդիսանա միեւնույն իրավախախտման համար),

3) հարցումը կազմված է սույն Համաձայնագրի 7-րդ հոդվածով սահմանված պահանջների խախտմամբ,

4) հարցվող տեղեկությունների փոխանցումը կարող է վնաս հասցնել հարցում ստացած մարմնի պետության ինքնիշխանությանը կամ առնչվել ազգային անվտանգության շահերին:

2. Հարցման կատարումը մերժելու կամ մասամբ մերժելու դեպքում հարցում ստացած մարմինը հարցումն ստանալու ամսաթվից հետո 10 օրացուցային օրվանից ոչ ուշ դրա մասին ծանուցում է ուղարկում հարցում ներկայացրած մարմին՝ նշելով մերժման (մասնակի մերժման) պատճառները:

Հոդված 11. Լիազոր մարմինների կողմից սեփական նախաձեռնությամբ ներկայացվող տեղեկությունները

Լիազոր մարմիններից յուրաքանչյուրը սեփական նախաձեռնությամբ առանց այլ լիազոր մարմնի հարցման կարող է տեղեկություններ տրամադրել կամ ապահովել տեղեկությունների տրամադրումը, որոնք, իր կարծիքով, կարող են մյուս լիազոր մարմնի համար օգտակար լինել՝ համապատասխան կարգավորիչ, վերահսկողական եւ հսկողական գործառույթների իրականացման ժամանակ: Ընդ որում, սույն Համաձայնագրի դրույթները կկիրառվեն այն դեպքում, երբ սույն հոդվածին համապատասխան տեղեկություններ տրամադրող լիազոր մարմինը նշում է, որ տեղեկությունների տրամադրումն իրականացվում է սույն Համաձայնագրի շրջանակներում:

Հոդված 12. Տեղեկությունների օգտագործումը

Հարցում ներկայացրած մարմինը սույն Համաձայնագրի շրջանակներում ստացված կոնֆիդենցիալ տեղեկությունները կարող է օգտագործել միայն հարցման մեջ նշված նպատակներով:

Հոդված 13. Տեղեկությունների գաղտնիության ապահովումը

1. Սույն Համաձայնագրի 5-րդ հոդվածին համապատասխան նշված կոնֆիդենցիալ տեղեկությունները չեն կարող որեւէ երրորդ կողմի փոխանցվել առանց այդ տեղեկությունները տրամադրած լիազոր մարմնի գրավոր համաձայնության:

2. Լիազոր մարմինները նվազագույնի են հասցնում այն անձանց թիվը, որոնց կարող են հասանելի լինել սույն Համաձայնագրի կատարման նպատակով փոխանցվող կոնֆիդենցիալ տեղեկությունները, այդպիսի իրազեկ անձանց շրջանակը սահմանափակելով բացառապես այն աշխատակիցներով եւ մասնագետներով, որոնց համար այդպիսի տեղեկությունների հասանելիությունն անհրաժեշտ է՝ ծառայողական պարտականությունները կատարելու համար:

3. Հարցման պատասխանը պատրաստելիս հարցում ստացած մարմինը ծանուցում է այն մասին, որ տրամադրվող բոլոր տեղեկությունները կամ դրանց մի մասը կոնֆիդենցիալ են՝ հարցում ստացած մարմնի պետության օրենսդրությանը համապատասխան:

Կոնֆիդենցիալ տեղեկությունների հետ գործ ունենալիս հարցում ներկայացրած մարմինը պաշտպանության այնպիսի միջոցներ է ձեռնարկում, որոնք կիրառվում են սեփական կոնֆիդենցիալ տեղեկությունների նկատմամբ:

4. Սույն հոդվածի 1-ին կետով եւ 3-րդ կետի երկրորդ պարբերությամբ նախատեսված պայմանների խախտման, ինչպես նաեւ սույն Համաձայնագրին համապատասխան ստացված կոնֆիդենցիալ տեղեկությունների անօրինական օգտագործման համար հարցում ներկայացրած մարմինը, դրա աշխատակիցները եւ մասնագետները սեփական կոնֆիդենցիալ տեղեկությունների հրապարակման համար հարցում ներկայացրած մարմնի պետության օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվություն են կրում:

5. Կոնֆիդենցիալ տեղեկությունների պաշտպանության պայմանների եւ կարգի փոփոխության մասին Կողմերից ցանկացածի կողմից որոշում ընդունվելու դեպքում

այդ անդամ պետության լիազոր մարմինը դրա մասին տեղեկացնում է այլ անդամ պետությունների լիազոր մարմիններին:

6. Սույն Համաձայնագրի գործողության ժամանակահատվածում փոխանցված կամ ստացված կոնֆիդենցիալ տեղեկությունների մասով սույն Համաձայնագրի գործողության դադարման դեպքում դրանց օգտագործման եւ պաշտպանության հետ կապված՝ սույն Համաձայնագրի 12-րդ հոդվածով եւ սույն հոդվածով նախատեսված միջոցները շարունակում են կիրառվել այնքան ժամանակ, մինչեւ որ կոնֆիդենցիալ տեղեկությունները տրամադրած լիազոր մարմնի կողմից համապատասխան ծանուցում չուղարկվի դրանց չեղարկման մասին:

Հոդված 14. Տեղեկությունների ստացման հետ կապված ծախսերը

Լիազոր մարմիններն իրենք են կրում իրենց պետության տարածքում սույն Համաձայնագրի կատարման հետ կապված ծախսերը, եթե նրանց կողմից այլ կարգ չի համաձայնեցվում:

Այն դեպքում, երբ հարցում ստացած մարմինը կարծում է, որ սույն Համաձայնագրին համապատասխան, հարցումը կատարելու հետ կապված կարող է զգալի ծախսեր կրել, լիազոր մարմինները հարցման կատարմանն առնչվող ծախսերի բաշխման վերաբերյալ արդարացի որոշում կայացնելու նպատակով կայանաավորվեն նախնական խորհրդակցությունների անցկացման վերաբերյալ:

Գլուխ IV. Եզրափակիչ դրույթներ

Հոդված 15. Փոփոխությունների կատարումը

Կողմերի պայմանավորվածությամբ՝ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են առանձին արձանագրություններով:

Հոդված 16. Սույն Համաձայնագրին միանալու պայմանները

Սույն Համաձայնագրին միացող պետությունն ապահովում է կոնֆիդենցիալ տեղեկությունների պաշտպանության այն մակարդակը, որը համարժեք է կոնֆիդենցիալ տեղեկությունների պաշտպանության՝ անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված մակարդակին:

Հոդված 17. Վիճելի հարցերի կարգավորումը

Կողմերի, լիազոր մարմինների միջև ծագող՝ սույն Համաձայնագրի մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են խորհրդակցությունների եւ բանակցությունների անցկացման միջոցով, այդ թվում՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աջակցությամբ:

Եթե Կողմերը, լիազոր մարմինները վեճը չեն կարգավորում բանակցությունների եւ (կամ) խորհրդակցությունների անցկացման վերաբերյալ՝ վեճի մի կողմից վեճի մյուս կողմին հասցեագրված պաշտոնական գրավոր դիմումն ստանալու օրվանից հետո վեց ամսվա ընթացքում, ապա վեճի կողմերից յուրաքանչյուրը կարող է վեճը հանձնել Եվրասիական տնտեսական միության դատարանի քննությանը:

Հոդված 18. Համաձայնագրի փոխադարձ կապը միջազգային այլ պայմանագրերի հետ

Սույն Պայմանագիրը չի առնչվում Կողմերից յուրաքանչյուրի՝ այն մյուս միջազգային պայմանագրերից բխող իրավունքներին ու պարտավորություններին, որոնց մասնակիցն են դրանք:

Հոդված 19. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելը

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը անդամ պետությունների կողմից կատարվելու մասին վերջին գրավոր ծանուցումն ավանդապահի կողմից դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից, սակայն «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագիրն ուժի մեջ մտնելուց ոչ շուտ:

2. Սույն Համաձայնագիրը Եվրասիական տնտեսական միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագիր է եւ Եվրասիական տնտեսական միության իրավունքի մասն է կազմում:

Կատարված է Մոսկվա քաղաքում, 2014 թվականի դեկտեմբերի 23-ին, մեկ բնօրինակից՝ ռուսերենով:

Սույն Համաձայնագրի բնօրինակը պահվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովում, որը, որպես սույն Համաձայնագրի ավանդապահ, յուրաքանչյուր Կողմի կտրամադրի դրա հաստատված պատճենը:

**Բելառուսի Հանրապետության
Կառավարության կողմից**

**Ղազախստանի Հանրապետության
Կառավարության կողմից**

**Ռուսաստանի Դաշնության
Կառավարության կողմից**

**Բելառուսի Հանրապետության
Ազգային բանկի կողմից**

**Ղազախստանի Հանրապետության
Ազգային բանկի կողմից**

**Ռուսաստանի Դաշնության
Կենտրոնական բանկի կողմից**